

**ԲԱԶԵԼՅԱՆ ԲՈՂՈՔԱԿԱՆ ՔԱՐՈՉԻՉՆԵՐԻ ՇՈՒՇԻՈՒՄ  
ՀԻՄՆԱԴՐԱԾ ՏՊԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ (1827-1835 ԹԹ.)**

*Բանալի բառեր – Շուշի, բողոքական քարոզիչներ, Բազելի Ավետարանական քարոզչական ընկերություն, Ս. Էջմիածնի Սինոդ, հրատարակություն, տպարան, գիրք, գրքույկ, գրաքննություն*

Շուշիում տպագրությունն սկիզբ է առել 1828 թ., որի համար նախադրյալ դարձավ Շվեյցարիայի Բազել քաղաքի Ավետարանական քարոզչական ընկերության գործունեությունը տարածաշրջանում: Իսկ մինչ այդ՝ 1827 թ., նույն բողոքական քարոզիչների ջանքերով Շուշիում արդեն կազմավորվել էր տպարան<sup>1</sup>:

Շուշիում բողոքական քարոզիչների գործունեությունը պայմանակա՝ նորեն կարելի է բաժանել քարոզչական, կրթական և հրատարակչական ուղղությունների: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ հասկանալի է, որ 1828-1835 թթ. Շուշիում քարոզիչների տպարանում պետք է հրատարակվեին այդ ուղղություններին առնչվող գրքեր:

Բողոքական քարոզիչները Շուշիում իրենց տպագրած գրքերը բաժանում էին երկու խմբի՝ դասագրքային հրատարակությունների և գիտական ուսումնասիրությունների (տրակտատներ)<sup>2</sup>: Երկրորդ պարագայում քարոզիչները մշտապես ֆինանսական աջակցություն էին ստանում Բրիտանական աստվածաշնչային ընկերությունից<sup>3</sup>, իսկ դասագրքային հրատարակությունները մեծ մասամբ իրականացնում էին Ավետարանական քարոզչական ընկերության միջոցներով: Սա միանգամայն հասկանալի էր, քանի որ բողոքական քարոզիչները կարիքավոր հայ երեխաների համար Շուշիում հիմնադրել էին կանոնավոր ուսումնարան<sup>4</sup>, ուստի պետք է տպագրեին դասա-

<sup>1</sup> Բազելյան բողոքական քարոզիչների՝ Շուշիում հաստատվելու և տպարան հիմնադրելու մասին տե՛ս **Պետոյան Ս.**, Շուշիում բազելյան բողոքական քարոզիչների հաստատումը և տպարանի հիմնադրումը // «Եվրոպական համալսարան», 2019, թիվ 10, էջ 372-384:

<sup>2</sup> Magazin für die neueste Geschichte der evangelischen Missions- und Bibelgesellschaften (Bazel), Vol. 16, 1831, S. 501 (այսուհետև՝ Evangelisches Missions-Magazin).

<sup>3</sup> Տե՛ս **Thomas S. R. O'Flynn**, The Western Christian Presence in the Russias and Qājār Persia c. 1760–c. 1870, Boston, 2017, p. 503:

<sup>4</sup> Դեռևս 1827 թ. քարոզիչները Շուշիում հիմնադրել էին հայկական կանոնավոր ուսումնարան, որտեղ սաները սերտում էին հայերեն գրել-կարդալ, մայրենի լեզվի քերականություն, Նոր Կտակարան և մասամբ՝ Հին Կտակարան, կատարում էին փոխադրություններ գրաբա-

գրքեր, ուսումնական գրքույկներ, բառարաններ և կրթական բնույթի այլ գրքեր, որոնք անհրաժեշտ էին տեղում ուսումնակրթական գործընթաց կազմակերպելու համար: Բանն այն է, որ տարածաշրջանում այդպիսի հրատարակություններ գտնելը դժուար էր: Հարկ է չմոռանալ, որ բողոքական քարոզիչների գլխավոր նպատակը եվրոպական լեզուներից թարգմանված կրոնաքարոզչական բնույթի գրքեր տպագրելն ու տարածելն էր: Այդ գրքերը նրանք դասում էին գիտական ուսումնասիրությունների շարքում:

Մինչ Շուշում հաստատվելը բողոքական քարոզիչները նպատակ ունեին իրենց ապագա տպարանն օգտագործել բացառապես տարածաշրջանի և հարակից երկրամասերի մուսուլմանների կրթության ու նրանց շրջանում քարոզչության համար: Սակայն քարոզիչները նպատակահարմար գտան ընդլայնել իրենց գործունեության սահմանները և ընդգրկել նաև հայերին՝ բացի թաթար-թուրքերենից տպագրության պատրաստելով նաև հայերեն գրքեր<sup>1</sup>:

Շուշում բողոքական քարոզիչները գիտեին, թե որո՞նք են իրենց առաքելության նպատակը և գործունեության սահմանները՝ մշտապես հաշվետու լինելով վերադաս մարմնին: Նրանցից մեզ հատկապես հետաքրքրում են Ավգուստ Հայնրիխ Դիտրիխը և Քրիստոֆ Ֆրիդրիխ Հասսը<sup>2</sup>, որոնք գործել են հենց հայկական միջավայրում՝ որոշակի ներդրում ունենալով հայ տպագրական և մանկավարժական ոլորտներում: Այսպես, Դիտրիխն ապահովում էր Շուշիի նորակառույց տպարանի բովանդակային կողմը՝ մասնավորապես կատարելով գիտական և թարգմանական բնույթի աշխատանքներ<sup>3</sup>: Մինչդեռ Հասսը ղեկավարում էր Շուշիի հայկական կանոնավոր ուսումնարանը<sup>4</sup>:

Դիտրիխը գեկուցագրերում մանրամասն տեղեկացնում էր իր գործունեության մասին: Նա ուրախությամբ նշում էր, որ, բացի անհրաժեշտ դասա-

---

րից աշխարհաբար: Դասավանդվում էին թվաբանություն և աշխարհագրություն՝ սաների համար կազմված հայերեն դասագրքեր, իսկ որոշ սաների ուսուցանում էին նաև ռուսերեն: Քարոզիչները ցանկացողներին անհատական դասընթացներով սովորեցնում էին հունարեն, լատիներեն, անգլերեն և եբրայերեն (տե՛ս **Պետոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 380):

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 372-384:

<sup>2</sup> Դեռևս 1825 թ. Դիտրիխը և Հասսը մեկ տարով մեկնել էին Մոսկվա՝ Լազարյան ճեմարանում հայերեն սովորելու և հայոց պատմությունն ու մշակույթը ուսումնասիրելու համար: Քարոզիչները Լազարյան ճեմարանում հայոց լեզվին տիրապետեցին Միքայել ծ. վ. Սալլանթյանցի ուսուցչությամբ (տե՛ս **Thomas S. R. O'Flynn**, նշվ. աշխ., էջ 486-487): Հ. Ղուկասյանցը հաղորդում է, որ Դիտրիխը Միքայել ծ. վ. Սալլանթյանցի մոտ գրաբար էր սովորել, իսկ Հասսը հմտացել էր Ղարաբաղի հայերեն գավառաբարբառի մեջ (տե՛ս **Ղուկասեանց Հ.**, Բողոքականությունն Կովկասում հայոց մեջ (պատմական նիւթեր), Թիֆլիս, 1886, էջ 3, 8):

<sup>3</sup> Դիտրիխը շնորհալի լեզվաբան էր: Փարիզում և Քեմբրիջում ուսանելու տարիներին նա ուսումնասիրել էր արևելյան մի շարք լեզուներ, վարժ տիրապետում էր հին հունարենին, լատիներենին, եբրայերենին, գերմաներենին, անգլերենին, արաբերենին, պարսկերենին (տե՛ս **Thomas S. R. O'Flynn**, նշվ. աշխ., էջ 483):

<sup>4</sup> Evangelisches Missions-Magazin, Vol. 14, 1829, S. 372-373.

գրքերից և ուսուցողական փոքր ձեռնարկներից, ավարտին է հասցրել դեռևս մի քանի տարի առաջ սկսած Մատթեոսի ավետարանի նախնական տարբերակը «Արարատյան բարբառով»<sup>1</sup>: Եթե նախկինում Դիտրիխը գրաբար ավետարանից որոշ հատվածներ փոխադրում էր աշխարհաբար արևելահայերենի, ապա արդեն հրատարակության պատրաստվող Մատթեոսի ավետարանի և ավելի ուշ՝ Նոր Կտակարանի պարագայում թարգմանում էր բնագրից՝ հին հունարենից<sup>2</sup>: Նախատեսված էր դրանք տպագրել Բրիտանական աստվածաշնչային ընկերության միջոցներով, որի օժանդակությամբ 1825 թ. Փարիզում հրատարակվել էր Հովհաննես Զոհրաբյան-Կոստանդնուպոլսեցու աշխատասիրած աշխարհաբար արևմտահայերեն (Կ. Պոլսի բարբառ) Նոր Կտակարանը<sup>3</sup>: Մատթեոսի ավետարանի և Նոր Կտակարանի տպագրության անհրաժեշտության մասին Դիտրիխը նշում է, որ տարածաշրջանի հայաբնակ վայրերում «Զոհրաբյան» Նոր Կտակարանը լեզվական տարբերությունների պատճառով շատ քիչ արևելահայերի էր հասկանալի<sup>4</sup>:

Բողոքական քարոզիչները մինչև Շուշիում հաստատվելն արդեն սովորել էին հայերեն, պարսկերեն և թուրքերեն, իսկ Շուշիում հասկացան, որ տարածաշրջանում իրենց գործունեության հետագա ընթացքի համար անհրաժեշտ էր տիրապետել նաև տեղական բոլոր լեզուների բարբառներին: Այս համատեքստում հասկանալի է քարոզիչների աշխարհաբար հայերենով գրքերի հրատարակության գաղափարը:

Զեկուցագրերից նաև տեղեկանում ենք, որ Շուշիի բողոքական քարոզիչները 1828 թ. վերջին Բրիտանական աստվածաշնչային ընկերությունից ստացել են նյութական աջակցություն, որը պետք է դյուրին և շարունակական դարձներ քրիստոնեական գրքույկների հայերեն հրատարակության գործը: Տեղի քարոզիչները նաև մտադրվել էին աշխարհաբար արևելահայերենի վերածել վաղ շրջանի եկեղեցական հայերի գրաբար երկերից մի քանիսը, սակայն դա այնքան էլ իրատեսական չեն համարել՝ մտավախու-

---

<sup>1</sup> Բարբառագիտական գրականության մեջ «Արարատյան բարբառ» լեզվաբանական եզրը հայտնի է նաև «Երևանի բարբառ» անունով: Այն հայոց լեզվի հնագույն տարբերակներից է: «Արարատյան բարբառը» դարեր շարունակ եղել է Մեծ Հայքի Այրարատ, Գուգարք նահանգների, նաև հարակից վայրերի բնակչության հիմնական մասի հաղորդակցության միջոցը: Այս բարբառով են խոսել Արևելյան Հայաստանի կենտրոնական մասում, Նախիջևանում, Աստապատում, Գաբեղյանքում (Կաղզվան), Ճակատքում (Սուրմալու), Խանլարում, Շահումյանում և այլուր: Արարատյան բարբառով խոսող բնակավայրեր կան Վրաստանի Մառնեուլի շրջանում (տե՛ս **Մեսրոպյան Հ.**, Երևանի բարբառի ընդհանուր բնութագիրը // «Երևան» գիտական հոդվածների ժողովածու՝ նվիրված Երևանի պատմության հարցերին, Երևան, 2006, էջ 122-123):

<sup>2</sup> Տե՛ս **Ատանալեան Կ.**, Յուշարձան հայ աւետարանականաց եւ Աւետարանական եկեղեցույ (քննական ծանօթութիւններով), Fresno, California, 1952, էջ 184:

<sup>3</sup> Տե՛ս **Վեր. Քասունի Ե. Ս.**, Լուսաշաւիղ (Պատմութիւն Հայ աւետարանական շարժման 1846-1946), Պէյրուօ, 1947, էջ 577:

<sup>4</sup> Evangelisches Missions-Magazin, Vol. 14, S. 373-374.

թյուն ունենալով, որ հայ հոգևորականները արգելք կհանդիսանային այդ աշխատանքներին՝ դրանք համարելով իրենց մենաշնորհը<sup>1</sup>:

Հասկանալի է, որ Շուշիի բողոքական քարոզիչների տպարանը, պայմանավորված վերը հիշատակված մի քանի գործունեերով, պետք է ծառայեր այդ նպատակների իրականացմանը: Փաստորեն, կարող ենք արձանագրել, որ կրթական և քարոզչական նման լայնածավալ գործունեություն իրականացնելու համար առաջնակարգ տեղ պետք է զբաղեցնեին տպարանը և տպագրական գործը:

Շուշիի տպարանի երախայրիքը 1828 թ. տպագրված «Լերան քարոզը»<sup>2</sup> (15 էջ) գրքույկն է, որը փորձական տպագրություն էր՝ 50 տպաքանակով: Նույն տարում քարոզիչները հասցրին հրատարակել ևս երեք գրքեր (գրքույկներ)<sup>3</sup>: 1828-1830 թթ. Շուշիում հրատարակվեցին ութ անուն գրքեր և գրքույկներ, որոնցից յոթը<sup>4</sup>, բացառությամբ «Լերան քարոզի», որպես դասագրքեր նախատեսված էին տեղում ուսումնակրթական գործունեություն իրականացնելու համար:

Իրենց հատուկ դիվանագիտական ճկուն քաղաքականության շնորհիվ բողոքական քարոզիչներին հաջողվեց այդ ժամանակահատվածում սերտ հարաբերություններ հաստատել տարածաշրջանի աշխարհիկ և հոգևոր իշխանությունների հետ, ինչը դրականորեն նպաստեց իրենց գործունեությանը: Թերևս միակ անհարմարությունն այն էր, որ հայկական գրաքննության հետևանքով տպագրության արտոնության անհարկի ուշացումներ էին լինում, որոնք, սակայն, ավելի ուշ կարգավորվեցին<sup>5</sup>: Բողոքական քարոզիչները ոչ միայն բարիդրացիական հարաբերություններ հաստատեցին հոգևոր ու աշխարհիկ իշխանությունների, այլև ժամանակի ուսյալ և երևելի անձնավորությունների հետ, որոնցից էին Շուշիի բողոքական քարոզիչների ուսումնարանի դասախոս Պողոս վրդ. Ղարադաղցին (Ներսիսյան)<sup>6</sup> և Հով-

---

<sup>1</sup> Evangelisches Missions-Magazin, Vol. 14, S. 374-375.

<sup>2</sup> «Լերան քարոզն» ընդգրկում է Մատթեոսի ավետարանի 5-7-րդ գլուխները:

<sup>3</sup> Շուշիում առաջին տպագիր հրատարակությունների մասին առավել մանրամասն տե՛ս **Պետոյան Ս.**, Նոր փաստեր Շուշիում տպագրված առաջին գրքերի մասին // «Բանբեր Մատենադարանի», 2020, թիվ 30, էջ 302-316:

<sup>4</sup> «Առաջին կանոն սաղմոսի», 1828 (300 տպաքանակ), «Պատմութիւն Սուրբ Գրոց», 1828 (500 տպաքանակ), «Գրաւոր լեզուի համառոտ տարրական քերականութիւն», 1828 (700 տպաքանակ), «Հաւաքումն աստուածային վկայութեանց յաղագս ամենայն ուսմանց քրիստոնէական հաւատոց», 1829 (2000 տպաքանակ), «Ընթերցուածք ի Սուրբ Գրոց Հին Կտակարանի», 1829 (700 տպաքանակ), **Պողոս վրդ. Ներսիսեան (Ղարադաղցի)**, «Համառոտութիւն հայկական քերականութեան», 1829 (400 տպաքանակ), **Յովսէփ վրդ. Արցախեցի**, «Համառոտ բարձր ի գրաբարէ յաշխարհաբարոն», 1830 (2000 տպաքանակ):

<sup>5</sup> Evangelisches Missions-Magazin, Vol. 14, S. 431.

<sup>6</sup> Պողոս Ներսիսյան Ղարադաղցին եղել է XIX դարի առաջադեմ և ճանաչված մանկավարժ-հոգևորական: Նա Գանձասարի վանքում աշակերտել է Հովսէփ Արցախեցուն, ապա սովորել Տաթևի վանքում և Կ. Պոլսում: Պ. Ղարադաղցին հայոց լեզու, ճարտասանություն և

սեփ վրդ. Արցախեցին (Տեր-Ավագյան)<sup>1</sup>: Պողոս վրդ. Ղարաղաղցին ուներ կրթելու մեծ փորձառություն և Շուշի էր տեղափոխվել Թիֆլիսի Ներսիսյան ուսումնարանից<sup>2</sup>: Ակնհայտ է, որ քարոզիչներն ամեն կերպ ձգտում էին իրենց ուսումնարանում տեսնել ոչ միայն հայ ուսուցիչների, այլև մեծ փորձառություն ունեցող գիտնականների: Նրանցից էր Հովսեփ վրդ. Արցախեցին, ով ոչ միայն ժամանակի մեծագույն գիտնականներից էր, այլև «այր մի սրբազնակրօն և ճգնագգեաց»<sup>3</sup>: Այսկերպ Շուշիի բողոքական քարոզիչների տպարանում այս գիտնականների աշխատասիրությամբ գրքերի տպագրությունները որևէ կերպ չէին կարող չարտոնվել հայ հոգևորականների կողմից:

Այսրկովկասում պաշտոնապես գրաքննություն սկսվեց Նիկոլայ Ա ցարի՝ 1837 թ. դեկտեմբերի 23-ի թիվ 10828 հրամանագրով, ըստ որի՝ Թիֆլիսում տեղական լեզուներով հրատարակված գրքերի գրաքննությունը ենթարկվելու էր Վրաստանի, Կովկասի և Անդրկովկասի երկրամասերի գլխավոր կառավարչի գրասենյակին<sup>4</sup>: Միայն 1844 թ. սեպտեմբերի 16-ին Անդրկովկասյան երկրամասի կառավարչապետը Ս. Էջմիածնի Սինոդին հղած գրությամբ պահանջեց տեղեկություններ հաղորդել, թե ո՞ւմ վճռով է հիմնվել Շուշիի տպարանը, և թե Սինոդը ի՞նչ հիմնավորմամբ է թույլատրել այնտեղ գրքեր տպագրել<sup>5</sup>: Փաստորեն, Շուշիում տպագրվող գրքերի նկատմամբ պաշտոնական ընթացակարգով գրաքննություն հաստատելու առաջին փորձն էր դա: Այս դեպքում պարզաբանման կարիք ունի, թե բողոքական քարոզիչների կողմից վերը հիշատակված հայկական գրաքննության հետևանքով տպագրության արտոնություն ասելով ի՞նչ պետք է հասկանալ:

Բողոքական քարոզիչների կողմից 1828-1830 թթ. Շուշիում տպագրված մեզ հասած գրքերի անվանաթերթերին հիշատակված են Եփրեմ Ա Ձորա-

---

տրամաբանություն է դասավանդել Էջմիածնի վանքի և Թիֆլիսի Ներսիսյան, Շուշիի Բագելյան քարոզիչների դպրոցներում, Թավրիզում, Ագուլիսում (ավելի մանրամասն տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հ. 7, Երևան, 1981, էջ 28):

<sup>1</sup> Հովսեփ Արցախեցին եղել է XVIII-XIX դդ. բանասեր, փիլիսոփա-հոգևորական: Արցախում դասավանդել է հայոց լեզու, աստվածաբանություն, փիլիսոփայություն և տրամաբանություն: Ավելի մանրամասն տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հ. 6, Երևան, 1980, էջ 579, **Մինասյան Թ.**, Արցախի գրչության կենտրոնները, Երևան, 2015, էջ 23:

<sup>2</sup> Թիֆլիսի Ներսիսյան ուսումնարանում Հարություն Ալամդարյանից հետո իր մասնագիտական կարողություններով երկրորդը մանկավարժ-գիտնական Պողոս վրդ. Ղարաղաղցին էր, որը եկել էր Ղարաբաղից Ն. Աշտարակեցու հրավերով (**Երիցեանց Ա.**, Պատմություն 75-ամեայ գոյութեան Ներսիսեան Հայոց հոգևոր դպրոցի որ ի Թիֆլիզ (1824-1899 թ.), հ. Ա. (1824-1850 թ.), վեց պատկերով, Թիֆլիզ, 1898, էջ 91, 106):

<sup>3</sup> **Ղուկասեանց Հ.**, նշվ. աշխ., էջ 11:

<sup>4</sup> Полное собрание законов Российской Империи, собрание второе, т. XII, отделение второе, СПб., 1838, с. 1034-1035, **Пагрушева Н. Г.**, История цензурных учреждений в XIX – начале XX века // «Книжное дело на Северном Кавказе: история и современность», сборник статей, вып. 2, Краснодар, 2004, с. 171.

<sup>5</sup> Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Բ, Էջմիածին, 2019, էջ 413:

գեղցի Ամենայն Հայոց կաթողիկոսի (1809-1830) և տպագրությունն արտոնող Վրաստանի (և այլոց) թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցու անունները, իսկ 1832-1833 թթ. տպագրված՝ մեզ հայտնի գրքերի անվանաթերթերին՝ Հովհաննես Ը Կարբեցի կաթողիկոսի (1831-1842) և տպագրությունն արտոնող «բոլոր Աղուանից հայոց»<sup>1</sup> մետրոպոլիտ Բաղդասար արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանի անունները:

Ինչպես տեսնում ենք, Շուշիում հրատարակվող գրքերի տպագրության համար բողոքական քարոզիչները նախապես պետք է ստանային հայ բարձրաստիճան հոգևորականների արտոնությունը, ինչը ենթադրում էր հոգևոր գրաքննություն<sup>2</sup>՝ համաձայն ցարական օրենքների<sup>3</sup>:

1828-1830 թթ. Շուշիում տպագրված գրքերի արտոնության համար Ներսես Աշտարակեցին պետք է անձամբ ծանոթանար<sup>4</sup> կամ Թիֆլիսից իր բացակայության ընթացքում (ինչը հաճախ էր պատահում) վստահելի անձից՝ Թիֆլիսի Ներսիսյան ուսումնարանի տեսուչ Հարություն Ալամդարյանից, տեղեկություն ստանալով տպագրվելիք գրքի բովանդակության, ինչպես նաև Հայ եկեղեցու վարդապետությանը չհակասելու մասին<sup>5</sup>: Մեր ձեռքի տակ ունենք Ներսես Աշտարակեցուն ուղղված Հարություն Ալամդարյանի 1828 թ. մի վավերագիր, որտեղ, ի թիվս այլ հարցերի, նրան տեղեկացնում էր, որ վերջինս տնօրինի բողոքական քարոզիչների որոշ գրքերի՝ Շուշիում տպագրության արտոնության հարցը<sup>6</sup>:

Խոսելով 1828 թ. Շուշիի տպարանի և տպագրական գործի ամփոփիչ հաշվետվության մասին՝ քարոզիչները խիստ կարևորություն էին հաղորդում դրանց: Հետաքրքրական է, որ այդ ժամանակահատվածում Շուշիի տպարանի առաջին տպագրիչ Հովհաննես Աբերկրոմբին (John Abercrombie)<sup>7</sup>,

---

<sup>1</sup> **Տե՛ր Յովհաննիսեանց Գ.**, Բաղդասար մետրոպոլիտ Հասան-Ջալալեանցի համառօտ կենսագրություն // «Փորձ», 1880, մայիս, թիվ 5, էջ 156:

<sup>2</sup> Ալեքսանդր Երիցյանը գրում է, որ ցարական Ռուսաստանի տիրապետության սկզբնական տարիներին Այսրկովկասում գրաքննիչի պաշտոն գոյություն չի ունեցել: Թիֆլիսում հրատարակվող հատուկենտ հայերեն գրքերը, որոնք մեծ մասամբ կրոնական բովանդակություն ունեին, քննության համար նախապես ուղարկվում էին տեղի հոգևոր առաջնորդին (տե՛ս **Երիցեանց Ա.**, Յիսնամեակ հայոց լրագրութեան Ռուսաստանում // «Արձագանք», 1896, թիվ 6, էջ 1):

<sup>3</sup> **Thomas S. R. O'Flynn**, նշվ. աշխ., էջ 530:

<sup>4</sup> Ներսես Աշտարակեցու կողմից տպագրական արտոնության հասնելու համար Շուշիի բողոքական քարոզիչների գործադրած ջանքերի և դիվանագիտական քայլերի մասին առավել մանրամասն տե՛ս **Պետոյան Ս.**, Նոր փաստեր Շուշիում տպագրված առաջին գրքերի մասին, էջ 302-316:

<sup>5</sup> Տե՛ս **Պետոյան Ս., Սուքիասյան Հ.**, Այսրկովկասի հայկական տպագրությունը և Ներսես արքեպիսկոպոս Շահազիզյանը // «Էջմիածին», 2020, թիվ 9, էջ 121:

<sup>6</sup> Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 59, վավ. 379:

<sup>7</sup> Ն. Աբերկրոմբին ազգությամբ չեքքեզ էր, տիրապետում էր քրիստոնեական համառոտ վարդապետությանը (կատեխիզմ), անգլերենին, գերմաներենին, ռուսերենին, թաթար-թուրքե-

որը Շուշիում գտնվելու տարիներին հասցրել էր սովորել նաև հայերեն, չէր կարողանում բավարարել օրեցօր աճող իրենց տպագրական պահանջները<sup>1</sup>: 1829 թ. ամփոփիչ զեկուցագրերից տեղեկանում ենք, որ Դիտրիխը գրեթե ամբողջությամբ զբաղված է եղել օտարալեզու, այդ թվում՝ աստվածաշնչյան գրքերի հայերեն թարգմանություններով, որոնք պետք է տպագրվեին իրենց տպարանում<sup>2</sup>: Տպագրական ծավալի մեծացմանը զուգընթաց՝ Շուշիում աստիճանաբար հասունացել էր նոր տպագրիչի անհրաժեշտություն, որին, տեղի քարոզիչների համոզմամբ, հնարավոր էր լուծում տալ Եվրոպայում տպագրական գործում հմտացած և փորձառու մասնագետի ներգրավմամբ: Մինչդեռ Աբերկրոմբին տպագրական գործը սովորել էր Աստրախանում գործող բողոքական քարոզիչների մոտ<sup>3</sup>, որը չէր բավարարում նոր պահանջներին: Ուստի Շուշիի բողոքական քարոզիչները դիմեցին Բազելի իրենց կենտրոնական ընկերությանը՝ նոր տպագրիչ ուղարկելու խնդրանքով: Նկատի ունենալով, որ արդեն իսկ մեծ քանակությամբ թարգմանական գրքեր էին կուտակվել դրանք տպագրելու համար, Բազելի ընկերությունը որոշեց բողոքական քարոզիչներից Յոհան Քրիստիան Ֆրիդրիխ Յուդթին (Johann Christian Friedrich Judt) անհապաղ գործուղել Շուշի<sup>4</sup>: Վերջինս Գերմանիայի Շտուտգարտ քաղաքում յուրացրել էր գրքերի տպագրության ու կազմարարության արվեստը և ուներ մեծ փորձ: Յուդթը Շուշիի տպարանի ղեկավարման աշխատանքներն ստանձնեց միայն 1830 թ. ապրիլից<sup>5</sup>՝ փոխարինելով Աբերկրոմբին, որը տպագրիչ էր աշխատել երեք տարի (1828-1830)<sup>6</sup>: Միաժամանակ հարկավոր էր տեղի բնակիչներից վարձել տպագրիչի օգնական<sup>7</sup>:

Համեմատելով Շուշիի տպարանում 1828-1829 թթ. ընթացքում հրատարակված գրքերի տպաքանակները՝ կարող ենք արձանագրել, որ եթե 1828 թ. գրքույկների նվազագույն տպաքանակը 50 էր, իսկ առավելագույնը՝ 700,

---

րենին և մի քանի այլ լեզուների: Հետագայում Աբերկրոմբին դառնում է երդվյալ քարոզիչ՝ ակտիվորեն ծավալելով քարոզչական գործունեություն և նպաստելով Սուրբ Գրքի թարգմանության, տպագրության ու տարածման գործին: Նա անվանակոչվել էր էլիմբուրգցի բժիշկ Հովհաննես Աբերկրոմբի (1780-1844) պատվին, որի միջոցներով փրկագնվել էր գերությունից (Thomas S. R. O'Flynn, նշվ. աշխ., էջեր 265, 333, 463):

<sup>1</sup> Evangelisches Missions-Magazin, Vol. 14, S. 376.

<sup>2</sup> Evangelisches Missions-Magazin, Vol. 16, S. 492. Այդ ընթացքում բողոքական քարոզիչները կատարել են կրոնաքարոզչական և կրթական աշխատությունների՝ ոչ միայն հայերեն, այլև պարսկերեն, թաթար-թուրքերեն և արաբերեն թարգմանություններ՝ նպատակ ունենալով իրենց գործունեությունն ընդարձակել նաև ոչ հայկական միջավայրում (տե՛ս Evangelisches Missions-Magazin, Vol. 15, 1830, S. 397-398):

<sup>3</sup> **Պետոյան Ս.**, Շուշիում բազելյան բողոքական քարոզիչների հաստատումը և տպարանի հիմնադրումը, էջ 379:

<sup>4</sup> Evangelisches Missions-Magazin, Vol. 15, S. 389-390.

<sup>5</sup> Evangelisches Missions-Magazin, Vol. 16, S. 492.

<sup>6</sup> Акты собранные Кавказскою Археографическою Коммиссиею, под редакцию А. Д. Берже, т. VIII, Тифлис, 1881, с. 324, 328 (այսուհետև՝ АКАК).

<sup>7</sup> Evangelisches Missions-Magazin, Vol. 14, S. 444.

ապա 1829 թվին համապատասխանաբար 400 և 2000 էր: Փաստորեն, 1829 թ. տպագրված գրքերը համեմատաբար ավելի ծավալուն էին և մեծաքանակ, ուստի և՛ ավելի բարդ ու ժամանակատար: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ Աբերկրոմբին չէր կարողանում բավարարել օրեցօր աճող տպագրական պահանջները, ապա հասկանալի է դառնում, թե տպարանի հետագա գործունեության համար քարոզիչներն ինչպիսի մեծ ծավալներ էին նախատեսում:

Ի պատիվ իրենց՝ նշենք, որ Շուշիի տպարանը կարողացավ ավելացնել ծավալները: Մինչ այդ հայկական միջավայրում դասագրքերը գրաբարով էին տպագրվում՝ ուսումնարանի սաներին աշխարհաբար սովորեցնելու համար: Հատկապես Հովսեփ Արցախեցու աշխատասիրած գրաբար-աշխարհաբար բառարանը, որի տպագրական աշխատանքները բողոքական քարոզիչները ձեռնարկեցին 1830 թվականին, նպաստեց ուսուցումը աշխարհաբարով կազմակերպելուն:

Բողոքական քարոզիչների առաքելության գլխավոր նպատակը, այնուամենայնիվ, Սուրբ Գիրքը հայերեն թարգմանելն ու ժողովրդի մեջ տարածելն էր: Բնական է, որ 1828-1830 թթ. քարոզիչների հրատարակած գրքերը պետք է ունենային կրթական և մանկավարժական ուղղվածություն: Դա պայմանավորված էր Շուշիի կանոնավոր ուսումնարանի գոյությամբ, որտեղ անվճար և որակյալ կրթություն էին ստանում հայ երիտասարդները: Նրանցից ոմանք դառնալու էին ապագա մանկավարժներ, մի մասն էլ համալրելու էր քարոզիչների շարքերը:

1829 թ. կեսերին Դիտրիխը Մատթեոսի ավետարանի աշխարհաբար արևելահայերեն թարգմանության նախնական տարբերակն ուղարկել էր Էջմիածնի իր ծանոթ հոգևորականին՝ թարգմանության որակը ստուգելու նպատակով<sup>1</sup>: Սակայն վերջինիս բացակայության պատճառով այն հասել էր մեկ այլ հոգևորականի, որը դրա բովանդակության մասին իրազեկել էր Մինոդին կամ Բարձրագույն խորհրդարանի սուրբ ժողովին: Այնուհետև Դիտրիխը Մինոդից ստացավ մի գրություն, ըստ որի՝ թարգմանական աշխատանքը կընդունվեր, եթե աշխարհաբար տեքստին զուգադիր լիներ նաև գրաբարը<sup>2</sup>, որը պետք է հաստատեր նաև Բրիտանական աստվածաշնչային ընկերությունը: Միևնույն ժամանակ այդ գրության մեջ նշվում էր, որ Մատ-

---

<sup>1</sup> Ի դեպ, քարոզիչներն իրենց գործունեության ընթացքում թե՛ հայերենով և թե՛ տարածաշրջանի այլ լեզուներով կատարած թարգմանությունները մի քանի անգամ վերանայում էին, իսկ հնարավորության դեպքում՝ քննարկում գիտակ անձանց հետ (տե՛ս **Thomas S. R. O'Flynn**, նշվ. աշխ., էջ 516):

<sup>2</sup> 1825 թ. Հովհաննես Չոհրաբյան-Կոստանդնուպոլսեցու աշխատասիրությամբ Փարիզում հրատարակված Նոր Կտակարանն ունի գրաբար-աշխարհաբար զուգադիր կառուցվածք, որի անվանաթերթին գրված է. «Ըստ հարազատ գաղափարի Հայկականս նախնի թարգմանութեան. հանդերձ առընթերդրութեամբ հաւատարիմ նկարագիր բացայայտութեան յերկրելոյ ի մերս հասարակաց անխառն բարբառ»:



թեոսի ավետարանի աշխարհաբար տպագրության արտոնության համար հարկ էր պաշտոնապես դիմել Մինոդին, քանի որ այդ հարցին նախանձախնդիր էր ամբողջ Հայ եկեղեցին<sup>1</sup>: Այսպիսով, Շուշիի տպարանի աշխատանքներում քարոզիչների համար հաջորդ կարևոր տպագրությունը պետք է լիներ Մատթեոսի ավետարանը:

Այդ նպատակով Շուշիի բողոքական քարոզիչները դիմեցին Էջմիածնի Մինոդին՝ թույլտվություն ստանալու խնդրանքով, որը նման կարևոր դիմումի պատասխանը վերապահել էր «հոգևորական գործերի ծայրագոյն կառավարիչ» Ներսես Աշտարակեցուն: 1829 թ. հոկտեմբերի 7-ի թվակիր նամակից հայտնի է դառնում, որ վերջինս առարկություն չունեւր այդ խնդրանքի առնչությամբ, քանի որ նախկինում արդեն իսկ եղել է Սուրբ Գրքն օտար լեզուներից հայերեն թարգմանելու ավանդույթը եկեղեցական այրերի կողմից: Սա նշանակում էր, որ նման նախաձեռնության թույլտվությունը չէր կարող որևէ կերպ վնասել Հայ եկեղեցու հեղինակությանը<sup>2</sup>:

Հակառակ Ներսես Աշտարակեցու բարեհաճ դիրքորոշման՝ Մատթեոսի ավետարանի արևելահայերեն տարբերակը Շուշիում չտպագրվեց, քանզի Էջմիածնի ղեկավարությունը, տեղի տալով որոշ եկեղեցականների հրահրած հակաբողոքական տրամադրություններին, ի վերջո չտվեց իր համաձայնությունը<sup>3</sup>:

Լարվածությունն ավելի շիկացավ հատկապես Բաղդասար մետրոպոլիտի՝ Մայր Աթոռին ուղղված նամակից հետո<sup>4</sup>, որով նա տեղեկացնում էր վտարված սարկավազներ Բարսեղի և Մովսեսի մասին, որոնք, թողնելով իրենց մենաստանը, հարել էին բողոքական քարոզիչներին և ժողովրդի մեջ

<sup>1</sup> Evangelisches Missions-Magazin, Vol. 15, S. 402.

<sup>2</sup> Տե՛ս **Սեդրակեան Արիստակես եպիսկոպոս**, Յովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեանցի կենսագրութիւնը, Ս. Պետերբուրգ, 1898, էջ 226-227:

<sup>3</sup> Հայ եկեղեցու հոգևորականների մեծ մասի մոտ իշխում էր այն տեսակետը, որ հայկական միջավայրում բողոքական քարոզիչների կողմից Սուրբ Գրքի տպագրությունն ու տարածումը դիտվում էին որպես հոգեորություն, քանի որ, նրանց կարծիքով, բողոքական քարոզիչների միսիոներական գործունեության դաշտը պետք է լինէին ոչ թե քրիստոնյա ժողովուրդները, այդ թվում՝ հայերը, այլ հեթանոս և մուսուլման շրջանակները: Մակայն մյուս կողմից էլ տվյալ ժամանակահատվածում Սուրբ Գրքի ձեռքբերման առումով բավական դժվարություններ կային, քանի որ շատ դեպքերում այդպիսի տպագրությունը, պայմանավորված մեծ ծախսերով, հազվադեպ էր իրականանում: Դա հաճախ չէին կարողանում ապահովել թե՛ Հայ եկեղեցին և թե՛ անհատ նախաձեռնողները: Չէ՞ որ որևէ գրքի տպագրությունը մինչև ժամանակ շահույթ ստանալու նպատակ էր հետապնդում: Բնական է, որ նման պայմաններում հանրության մեջ մեծ պահանջարկ պետք է առաջանար Սուրբ Գրքի նկատմամբ ինչպես աշխարհաբար արևելահայերենով, այնպես էլ՝ աշխարհաբար արևմտահայերենով: Ուստի ելնելով հայերեն տպագիր Աստվածաշնչի պակասից, հատկապես XIX դարի երկրորդ կեսից սկսած՝ մինչև անգամ հայ քահանաների ձեռքում երբեմն հայտնվում էին բողոքական հրատարակության օրինակները:

<sup>4</sup> Բողոքական քարոզիչները նախապես բարեկամական հարաբերություններ էին հաստատել Բաղդասար արքեպիսկոպոսի հետ (տե՛ս **Ղուկասեանց Հ.**, նշվ. աշխ., էջ 10):

տարածում էին «Լյութերի աղանդը»: Մետրոպոլիտը նահանգապետին հատուկ գրություն է ուղարկում՝ խնդրելով այդ երկու սարկավագներին հարկադրաբար բերման ենթարկել Մայր Աթոռ<sup>1</sup>:

1830 թ. կեսերից Պողոս վրդ. Ղարաղաղցին, որը դասավանդում էր Շուշիի բողոքական քարոզիչների ուսումնարանում, լարված հարաբերությունների պատճառով հրաժարվեց իր պաշտոնից, իսկ ժողովրդին կոչ արեց հրաժարվել բողոքական քարոզիչների ուսումնարան սաներ ուղարկելուց<sup>2</sup>: Այս իրողություններն ավելի մեծացրին Էջմիածնի դժգոհությունները բողոքական քարոզիչների նկատմամբ: Էջմիածինը ցարական իշխանություններին ուղղված պաշտոնական գրություններով բողոքի ալիք բարձրացրեց բողոքական քարոզիչների գործունեության դեմ<sup>3</sup>:

1830 թ. Էջմիածնի Սինոդից Շուշի ուղարկվեց մի վստահելի հոգևորական՝ Չաքարիա վրդ. Բեհբուդյանը<sup>4</sup>, որը տեղի հայ բնակչության մեջ բողոքական քարոզիչների դեմ բացասական տրամադրություններ սերմանեց՝ վնասելով նրանց տպարանի գործին և նվազեցնելով ուսումնարանի սաների թվաքանակը<sup>5</sup>: Բնական է, որ հայ հոգևորականը չէր կարող ուղղակի արգելք լինել տպարանի և ուսումնարանի աշխատանքներին, որովհետև դրանց գործունեության արտոնությունները տրվում էին ցարական իշխանությունների կողմից: Իսկ ինչ վերաբերում է Շուշիի տպարանին, ապա այստեղ Հայ եկեղեցին ուներ անուղղակիորեն ազդելու միջոցներ՝ պայմանավորված հայերեն գրքերի տպագրության արտոնության հանգամանքով: Այսկերպ խոչընդոտվեց նաև տպարանի աշխատանքը: Չաքարիա վարդապետը, անդրադառնալով բողոքական քարոզիչների վնասակարությանը, նրանց նույնիսկ առնչում էր ֆրանսկ-մասոնների հետ<sup>6</sup>:

Բողոքական քարոզիչներն այս գործողություններից անակնկալի եկան, քանի որ մշտապես ձգտում էին լավ հարաբերություններ ունենալ աշխարհիկ և հոգևոր իշխանությունների, այդ թվում՝ Հայ եկեղեցու ներկայացուցիչների հետ: Ուստի եթե կանխատեսեին այս անսպասելի հարվածը, ապա հազիվ թե նախապես դիմեին իրենց վերադաս մարմնին՝ ավելի մեծ միջոցներ տրամադրելու խնդրանքով<sup>7</sup>:

Ընդհանրապես, հայ հոգևորականները բողոքական քարոզիչներին մեղադրում էին այն հարցում, որ Շուշիի ուսումնարանի սաների շրջանում

---

<sup>1</sup> Այս մասին տեղեկանում ենք Հ. Շահխաթունյանցի 1830 թ. օգոստոսի 4-ի նամակից՝ ուղղված Սևանի վանահորը (տե՛ս **Մեղրակեան Արիստակէս Եպիսկոպոս**, նշվ. աշխ., էջ 230-231):

<sup>2</sup> ԱԿԱԿ, Կ. VII, Тифлис, 1878, с. 309.

<sup>3</sup> **Ղուկասեանց Հ.**, նշվ. աշխ., էջ 18-19:

<sup>4</sup> **Մեղրակեան Արիստակէս Եպիսկոպոս**, նշվ. աշխ., էջ 231:

<sup>5</sup> Evangelisches Missions-Magazin, Vol. 16, S. 498-499, ԱԿԱԿ, Կ. VII, с. 293.

<sup>6</sup> ԱԿԱԿ, Կ. VII, с. 293.

<sup>7</sup> **Thomas S. R. O'Flynn**, նշվ. աշխ., էջ 512:

տարվում էր բողոքականամետ կրոնական քարոզչություն: Ի պատասխան՝ քարոզիչները հակադարձում էին, որ ոչ միայն հայերին չեն ուղղորդում դեպի իրենց բողոքական հավատքը, այլև նույնիսկ հորդորում էին՝ երբեք չանդրադառնալ երկու եկեղեցիների միջև եղած դավանաբանական հակասություններին: Բացի դրանից՝ քարոզիչներն իրենց ապահովագրելու համար որպես փաստարկ օգտագործում էին ուսումնարանում գործածվող գրքերի՝ հայ հոգևորականների կողմից արտոնված լինելը<sup>1</sup>:

1830 թվականը բողոքական քարոզիչների համար ամենաճանր տարին էր ոչ միայն այն պատճառով, որ իրենց դեմ աստիճանաբար սաստկանում էր հակաքարոզչությունը, այլև՝ որ նույն թվականին Շուշիում և շրջակայքում տարածվել էր համաճարակ, ինչը բացասական հետևանք էր թողել քարոզիչների գործունեության վրա<sup>2</sup>: Մոլեգնող համաճարակից զերծ չէր մնացել նաև Շուշի ժամանած Յուդթը: Տպագրական աշխատանքների խափանումից առաջ, ինչպես նաև տպարանի հետագա վերագործարկման ընթացքում բնականոն աշխատանքների գլխավոր խոչընդոտը Մոսկվայից ստացվող տպագրական թղթի առաքման դժվարություններն էին<sup>3</sup>:

Այս պայմաններում, ելնելով տպարանի հետագա աշխատանքների անորոշ հեռանկարի մտավախությունից, Յուդթը տպարանում աշխատանքի է ընդունում երկու հայ երիտասարդի՝ իբրև օգնականների: Սա արվում էր այն պատճառով, որ ավարտին հասցվեին նախորդ տարիներին կիսատ մնացած աշխատանքները: Յուդթն շտապում էր ամբողջացնել նաև տպարանի՝ տվյալ տարվա անավարտ գործերը, մասնավորապես՝ «Համառոտ բառ գիրք ի գրաբառէ յաշխարհաբառ» բառարանի տպագրությունը (1830-1831 թթ.), որի կազմարարական աշխատանքներն ավարտվեցին 1832 թ.՝ ժամանակատար լինելու պատճառով: Մյուս կողմից, հաշվի առնելով բառարանի ծավալը (400 էջ) և տպաքանակը (2000 օրինակ), հասկանալի է դառնում, որ հնարավոր չէր այն կարճ ժամանակում ավարտին հասցնել փափուկ կազմով, որը մինչ այդ լայնորեն կիրառելի էր Շուշիի տպարանի հրատարակած գրքերի համար: Ավելի ուշ Յուդթը տպարանից հեռացնում է իր երկու օգնական աշխատակիցներին՝ մեզ անհայտ հանգամանքների ի հայտ գալու պատճառով<sup>4</sup>:

Շուշիում տպարանի աշխատանքների կասեցումը չխաթարեց Շուշիից դուրս բողոքական քարոզիչների՝ հայերեն գրքերի հրատարակման գործը: Դրա վկայությունն են 1830-1834 թթ. Մոսկվայի Լագարյան ճեմարանի տպարանում բողոքական քարոզիչների տպագրած գրքերը<sup>5</sup>: Այսպես, օրինակ,

<sup>1</sup> AKAK, т. VII, с. 305.

<sup>2</sup> Evangelisches Missions-Magazin, Vol. 17, 1832, S. 425, 404.

<sup>3</sup> Evangelisches Missions-Magazin, Vol. 16, S. 501.

<sup>4</sup> Evangelisches Missions-Magazin, Vol. 17, S. 447.

<sup>5</sup> Տե՛ս «Երեք խօսակցութիւնք մին քահանայի մին աշխարհական մարդոյ հետն» (1830), «Աւետարանի գորութիւն կամ մին արաբ ծառայի պատմութիւն որ Քրիստոսի հաւատքովն

Լազարյան Ճեմարանի ուսուցիչ Միքայել ծ. վ. Սալլանթյանը<sup>1</sup>՝ որպես գրաքննիչ («դատաքննիչ գրոց»), չէր մերժում քարոզիչների՝ գրքերը տպագրելու թույլտվության միջնորդությունները, իսկ Ճեմարանի տպարանն ընդառաջում էր նրանց՝ շահույթ ստանալու նպատակով<sup>2</sup>:

1832 թվականից սկսած՝ հայ հոգևորականների բողոքները դադարեցին, երբ, ինչպես բողոքական քարոզիչներն էին հիշատակում զեկուցագրերում, իրենց քարոզչական գործունեությունը տեղափոխեցին հայերի շրջանակից դուրս<sup>3</sup>: Բանն այն է, որ Շուշիի բողոքական քարոզիչները, սկսած 1832 թվականից, լայնածավալ գործունեություն էին ձեռնարկում տարածաշրջանի ոչ քրիստոնյա օտարազգիների շրջանում, հատկապես թաթար-թուրքերի և պարսիկների, ինչպես նաև Պարսկաստանի հետ սահմանամերձ համայնքներում: Ուստի պարզ է դառնում Շուշիում բողոքական նոր քարոզիչների հայտնվելը:

Վերադառնալով բողոքական քարոզիչների տպագրական գործունեությանը՝ նշենք, որ նրանք դեռևս 1832 թ. հունվարի 15-ին Բոստոնի ամերիկյան քարոզչական ընկերությունից<sup>4</sup> ստացել են մի նամակ, որով առաջարկվում էր Մալթայում գործող իրենց տպարանում<sup>5</sup> անվճար տպագրել Դիտրիխի թարգմանությունները, ապա դրանք ուղարկել Շուշի՝ հայերի շրջանում տարածելու համար: Քանի որ Մալթայում ամերիկացի քարոզիչների հրատարակությունները դուրս էին հայ հոգևոր դասի վերահսկողությունից,

---

երանելի էլա» (1830), «Համառոտ քննութիւն քրիստոնէական հաւատոց եւ մահմետական կրօնի» (1831), «Սուրբ Աւետարան ըստ Մատթէոսի» (1831), «Նոր Կտակարան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» (1834):

<sup>1</sup> Մ. Սալլանթյանը, լինելով Էջմիածնի միաբանության՝ իր ժամանակի կրթված անդամներից մեկը, ոչ միայն հայտնի էր որպես Լազարյան Ճեմարանի կրոնուսույց, հայոց լեզվի երկարամյա ուսուցիչ և գրականագետ, այլև որպես հայ եկեղեցական գրքերի՝ պատկան մարմինների կողմից հաստատված գրաքննիչ (տե՛ս **Շահագիզ Ե.**, Միքայել վարդապետ Սալլանթյան // «Էջմիածին», 1946, Գ տարի, փետրվար-մարտ, էջ 41):

<sup>2</sup> **Դավթյան Հ.**, Նյութեր արևելահայ գրական աշխարհաբարի պատմությունից // «ԼՀԳ», 1970, թիվ 2, էջ 85:

<sup>3</sup> ԱԿԱԿ, Ծ. VIII, Կ. 325.

<sup>4</sup> Խոսքը վերաբերում է դեռևս 1810 թ. հունիսի 10-ին Բոստոնում հիմնադրված «Օտարերկրյա առաքելության ամերիկյան քարոզչական ընկերությանը» («American Board of Commissioners for Foreign Missions»), որը, սկսած 1822 թվականից, քարոզչական լայնածավալ գործունեություն էր իրականացնում արևմտահայերի շրջանում: Այն վերջիններիս առավելաբար հայտնի էր «Ամերիկեան Պորտ ընկերութիւն» անվամբ (տե՛ս **Ավագյան Ք.**, Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը (սկզբնավորումից մինչև 1924 թ.), Երևան, 2000, էջ 17, **Հակոբյան Գ.**, Հայերի գաղթը ԱՄՆ // «ԼՀԳ», 1986, թիվ 12, էջ 36-37):

<sup>5</sup> Այս ընկերության քարոզիչները, 1828 թ. հաստատվելով Մալթայում, հիմնել են տպարան, որտեղ հրատարակել են կրոնաքարոզչական գրքեր: 1833 թ. վերջին այս տպարանը Մալթայից տեղափոխվել է Զմյուռնիա (տե՛ս **Փայասյան Ստ.**, Ամերիկացի բողոքական միսիոներների գործունեությունն Օսմանյան կայսրությունում 19-րդ դարի առաջին կեսին // «Բանբեր Հայաստանի արխիվների», 2005, թիվ 1, էջ 124-125):

ուստի նրանք որևէ կերպ չէին կարող խանգարել բողոքական քարոզիչներին: Այստեղ հետաքրքրականն այն է, որ Շուշիի բողոքական քարոզիչները կարևորում էին ոչ թե հեռավոր Մալթայում, այլ, հակառակ դժվարություններին, տեղում կազմակերպել տպագրական գործը, որպեսզի այն չթուլանար՝ մատնվելով անգործության: Ամերիկացի բողոքական քարոզիչները պատրաստակամ էին նաև նրանց մշտապես ցուցաբերել նյութական աջակցություն՝ տարածաշրջանում հայկական ուսումնարաններ հիմնելու և պահպանելու համար<sup>1</sup>:

1832 թ. Բաղդասար մետրոպոլիտը բողոքական քարոզիչներին արտոնել էր Շուշիում նոր գրքեր տպագրել<sup>2</sup>: Հարց է առաջանում, թե նա դա արդյո՞ք համաձայնեցրել էր Էջմիածնի Սինոդի հետ, որի գործունեությունը կաթվածահար վիճակում էր Հովհաննես Ը Կարբեցի կաթողիկոսի գահակալության առաջին իսկ տարիներին<sup>3</sup>: Միննույն ժամանակ, Սինոդն իր նշանակությունը կորցրել էր հիշյալ կաթողիկոսի՝ գահին բազմելուց անմիջապես հետո<sup>4</sup>: 1836 թվին Հայ եկեղեցու «պոլոժենիե»-ի հաստատվելուց հետո միայն Սինոդը վերսկսեց իր գործառույթները<sup>5</sup>:

Բացառված չէ, որ Բաղդասար մետրոպոլիտը բողոքական քարոզիչներին գրքերի տպագրությունը թույլատրելիս կայացրել է միանձնյա որոշում<sup>6</sup>: Հակառակ դեպքում Սինոդը չէր արտոնի տպագրությունը, քանի որ Հովհաննես Ը Կարբեցին հայտնի էր հակաբողոքական դիրքորոշմամբ: Դեռևս 1832 թ. կեսերին նա բողոքներ է հասցեագրել պատկան մարմիններին՝ պահանջելով արգելել Շուշիի բողոքական քարոզիչների գործողությունները հայերի շրջանում: Նրանք գերադասում էին հայերի շրջանում խուսափել քարոզչական ազատ գործունեությունից, քանի որ դա կխաչընդոտեր իրենց հետագա աշխատանքները, ինչն իր հերթին պատճառ կհանդիսանար, որ քարոզչական գործունեությունն արգելվեր նաև տարածաշրջանի մուսուլմանների շրջանում<sup>7</sup>:

---

<sup>1</sup> Evangelisches Missions-Magazin, Vol. 18, 1833, S. 387.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 470:

<sup>3</sup> Պատմական քաղաածներ, պրակ հինգերորդ, Յովհաննես Ը. կաթողիկոս, մասն I, կազմեց Եղիշէ ա. ք. Գեղամեանց (արտատպւած «Հովիտ» շաբաթաթերթից), Բագու, 1911, էջ 656:

<sup>4</sup> Պատմական քաղաածներ, պրակ վեցերորդ, Յովհաննես Ը. կաթողիկոս, մասն II, կազմեց Եղիշէ ա. ք. Գեղամեանց (արտատպւած «Հովիտ» շաբաթաթերթից), Բագու, 1913, էջ 755-756:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 811:

<sup>6</sup> Ուշագրավ է Բաֆֆիի հաղորդած հետևյալ տեղեկությունը, որ «Պոլոժենիե»-ի հաստատմամբ Բաղդասար արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանի իրավունքները սահմանափակվեցին: Մինչ այդ նա համարվում էր Աղվանից մետրոպոլիտ և ազատ էր իր հոգևոր իշխանության մեջ, բայց կոնսիստորիայի հաստատվելուց հետո նա ամբողջովին ենթարկվեց Էջմիածնի հոգևոր իշխանությանը, որը բավական խաչընդոտեց մետրոպոլիտի ազատ գործունեությունը (տե՛ս **Բաֆֆի**, Երկերի ժողովածու տասը հատորով, հ. տասներորդ, Երևան, 1964, էջ 324):

<sup>7</sup> Evangelisches Missions-Magazin, Vol. 18, S. 470.

Փաստացի, Շուշիի չգործող տպարանի<sup>1</sup> պատմության համար 1832-1833 թթ. նոր էջ է սկսվում: 1832 թ. այնտեղ տպագրված առաջին հրատարակություններից երեքը դասագրքային բնույթ ունեին<sup>2</sup> և նախկինում արդեն իսկ հրատարակվել էին, մինչդեռ չորրորդ՝ «Շատ հարկաւոր հարցմունքներ ամէն մարդոյ համար» գրքույկը<sup>3</sup>, համարվելով գիտական ուսումնասիրություն, ուներ կրոնաքարոզչական նշանակություն: Այն իրենից ներկայացնում էր աշխարհաբար արևելահայերեն աշխատություն, որը նախապես թարգմանել էր Դիտրիխը:

Նույն թվականին, պայմանավորված թղթի առաքման ուշացումներով, տպագրական աշխատանքներն ընդհատվում են մինչև Մոսկվայից նոր քանակությամբ թղթի ստացումը: Թուղթն ստանալուն պես Յուդթը վերսկսում է տպագրել Դիտրիխի արևելահայերեն թարգմանությունները, որոնք բավականաչափ կուտակվել էին<sup>4</sup>: 1832-1833 թթ. Շուշիում հրատարակված 18 գրքերից հինգը դասագրքեր էին, իսկ 13-ը եվրոպական լեզուներից հիմնականում արևելահայերեն թարգմանված կրոնաքարոզչական բնույթի գրքեր էին: Դրանք ոչ ծավալուն հրատարակություններ էին, որոնց մեծ մասը՝ 1500-2000 տպաքանակով: Հարկ է նշել, որ միայն 1833 թ. Յուդթի ղեկավարությամբ Շուշիի տպարանում լույս են տեսել 12 անուն գրքեր և գրքույկներ: Թերևս պատճառներից մեկն այն է, թե ինչու տարիներ առաջ Շուշիում անհրաժեշտություն զգացվեց եվրոպական կրթություն ստացած տպագրիչի, որպեսզի մեծ թափ հաղորդվեր տպագրական աշխատանքներին: Իսկ Յուդթի՝ որպես եվրոպացի առաջադեմ տպագրիչի նորարարություններից բերենք մեկ օրինակ: 1832-1833 թթ. Շուշիում բողոքական քարոզիչների տպագրած որոշ գրքերի վերջում հանդիպում ենք վաճառվող գրքերի՝ համառոտ վերնագրերով ցանկերի, որոնց նախորդում է «Շուշի բերդումն աւետարանական ժողովքի տան մէջն էս հետևող գրեանքս էլ ծախվում են» սկսվածքը: Ցանկերում հիշատակված գրքերը, բացառությամբ առաջինի («Նոր Կտակարան տպեալ ի Վենետիկ»), բողոքական քարոզիչները մեծ մասամբ տպագրել են Շուշիում, իսկ մնացածը՝ Մոսկվայում<sup>5</sup>: Մեր ուսումնասիրությունը ցույց է

---

<sup>1</sup> Այդ ընթացքում (1830-1832 թթ.) գրաբար-աշխարհաբար բառարանից հետո Շուշիի տպարանում որևէ գիրք չի տպագրվել:

<sup>2</sup> «Տետրակ այբուբենական» (1200 տպաքանակ), «Առաջին կանոն սաղմոսի» (1500 տպաքանակ), «Պատմութիւն Սուրբ Գրոց» (1500 տպաքանակ): Վերջին երկու գրքույկների՝ որպես դասագրքային հրատարակությունների կիրառելիության և նշանակության մասին առավել մանրամասն տե՛ս **Պետոյան Մ.**, Նոր փաստեր Շուշիում տպագրված առաջին գրքերի մասին, էջ 302-316:

<sup>3</sup> «Շատ հարկաւոր հարցմունքներ ամէն մարդոյ համար» (1200 տպաքանակ), Շուշի, 1832:

<sup>4</sup> Evangelisches Missions-Magazin, Vol. 18, S. 473-474.

<sup>5</sup> Ցանկերում տեղ գտած գրքերի գները, տպագրության տարեթիվը, վայրը, տպարանը բացակայում են, իսկ յուրաքանչյուր գրքի մասին տեղեկությունը հակիրճ է (վերնագիր, լեզվական բնորոշում՝ «գրաբար», «աշխարհաբար», «ի գրաբարտ յաշխարհաբար»):

տալիս, որ այդ ցանկերը հիմնականում հանդիպում են բողոքական քարոզիչների տպագրած գիտական ուսումնասիրությունների վերջում: Մա կարելի է բացատրել այն հանգամանքով, որ քարոզիչներն այս ցանկերի միջոցով ընթերցողներին էին ծանոթացնում իրենց նախկին հրատարակությունները՝ միաժամանակ առիթն օգտագործելով դրանց վաճառքի և տարածման համար: Նմանօրինակ երևույթը հայկական տպագրության մեջ հանդիպում է ավելի ուշ ժամանակներում:

1833 թ. բողոքական քարոզիչները նոր հարված ստացան Հայ եկեղեցուց: Բանն այն է, որ Շուշիի բողոքական քարոզիչները կարողացել էին ինքնակազմակերպվել Շամախիում ևս, որտեղ գործում էր նաև հայկական ուսումնարան: Տեղի հոգևորականները քարոզիչների կասկածելի գործունեության դեմ բողոք են ներկայացրել Հովհաննես Ը Կարբեցի կաթողիկոսին: Վերջինիս հրամանով Ջաքարիա եպիսկոպոս Բեհբությանն ուղարկվեց Շամախի՝ տեղում ծանոթանալու բողոքական քարոզիչների «այցելությունների» հետևանքներին: Եպիսկոպոսը, տեղում ստուգելով սաների կրոնական գիտելիքները, դրանք գոհացուցիչ չի համարել Հայ եկեղեցու տեսանկյունից<sup>1</sup>:

1833 թ. բողոքական քարոզիչները դարձ կատարեցին գրաբարյան հրատարակություններին, որոնց նպատակն էր ցույց տալու, որ իրենք չէին մերժում գրաբարը՝ այդկերպ փորձելով թուլացնել իրենց դեմ սաստկացող ճնշումները: Գրքերից առաջինը՝ Մբ. Կյուրեղի ճառը<sup>2</sup>, ընդունելի և կիրառելի է Հայ Առաքելական եկեղեցում, իսկ մյուսը՝ Միքայել վրդ. Չամչյանցի արժեքավոր աշխատությունը<sup>3</sup>, գրեթե մի ամբողջ հարյուրամյակ ճանաչվել է գրաբարի քերականության լավագույն ձեռնարկ՝ գործածվելով թե՛ արևմտահայ և թե՛ արևելահայ դպրոցներում<sup>4</sup>: Մակայն եթե 1832-1833 թթ. բողոքական քարոզիչների հրատարակած գրքերից յուրաքանչյուրի միջին տպաքանակը 1500-2000 էր, ապա դիցուք Կյուրեղ Երուսաղեմացու ճառը քարոզիչները տպել են 750 օրինակով, ինչը վկայում է իրենց դրսևորած ճկուն դիվանագիտության մասին: Թեև այս գրքույկը հենված է Ընդհանրական եկեղեցու վարդապետության վրա, որին հավատարիմ է մնացել նաև Հայ Առաքելական եկեղեցին (դրան մի շարք կետերում հակադրվում է բողոքական շարժման

<sup>1</sup> **Ղուկասեանց Հ.**, նշվ. աշխ., էջ 38-39:

<sup>2</sup> Սրբոյն Կիւրղի Երուսաղեմացոյ հայրապետի ճառ վասն տասնհրամանեան հաւատոյ: Առեալ ի մատենէ Կոչումն ընծայութեան կոչեցելոյ: Վերստին տպագրեալ, Շուշի, 1833:

<sup>3</sup> Քերականութիւն հայկազեան լեզուի: Եւ այժմ նորոգ համառօտեալ աշխատասիրութեամբ նորին առ ի դիւրութիւնն ուսանողաց, Յօրինեալ ի Հայր Միքայել Վարդապետէ Չամչեանց: Տպագրեալ ի Վենետիկ յամի տեառն 1801: Վերստին տպագրեալ, Շուշի, 1833: Ի դեպ, գրքի տպագրությունն ավարտվել է 1834 թ. հունվարի 11-ին, թեև անվանաթերթին տպագրության տարեթիվը նշված է 1833:

<sup>4</sup> Տե՛ս **Ուրթուջան Ա.**, Միքայել Չամչյան (կյանքի և գործունեության համառոտ ուրվագիծ) // «ԼՀԳ», 1988, թիվ 9, էջ 75: Այս աշխատությունը միայն 1801-1859 թվականներին վերահրատարակվել է ավելի քան 15 անգամ:

ուսմունքը), սակայն քարոզիչներն այսկերպ փորձում էին սիրաշահել Էջմիածնի և Գանձասարի բարձրաստիճան եկեղեցականներին՝ գուցե նաև նման քայլով ջանալով ցույց տալ, թե իրենք աղանդավորներ չեն, քանի որ «չեն մերժում» Հայ Առաքելական եկեղեցու պաշտոնական դավանանքը<sup>1</sup>:

Բողոքական քարոզիչներն իրենց զեկուցագրերում նշում են, որ թեև 1832 թ. հայերեն գրքեր տպագրելու արտոնություն էին ստացել, սակայն մտավախություններ ունեին սեփական տպարանի ապագայի վերաբերյալ, ինչը պայմանավորված էր իրենց գործունեության նկատմամբ որոշ հայ հոգևորականների ցուցաբերած ոչ բարյացակամ վերաբերմունքով: Նրանք նույնիսկ կանխագգում էին, որ տպարանի աշխատանքներն ստիպողաբար կդադարեցվեն: Ուստի անհրաժեշտ էին համարում Լոնդոնից շտապ ձեռք բերել պարսկերեն տառատեսակներ՝ Շուշիում պարսկերեն և թաթար-թուրքերեն գրքերի տպագրություն իրականացնելու նպատակով<sup>2</sup>:

Այստեղ անհրաժեշտ ենք համարում նշել, որ Շուշիի տպարանի գործունեության հենց սկզբից բողոքական քարոզիչները նպատակ ունեին բացի հայերենից հրատարակել նաև թաթար-թուրքերեն գրքեր: Մակայն միայն 1832 թ., երբ զգացին, որ իրենց գործունեության ապագան հայերի շրջանում վտանգված է, քայլեր ձեռնարկեցին այդ ուղղությամբ: Այդ լեզուներով գրքերի տպագրությունը հնարավոր էր իրականացնել առանց արգելքի, քանի որ քարոզիչները մինչ այդ արտոնություն էին ստացել Կազանում գտնվող գրաքննիչ համայնքից<sup>3</sup>:

1834 թ. Շուշիի տպարանում բողոքական քարոզիչները որևէ գիրք չեն հրատարակել՝ պայմանավորված մի քանի գործոններով: Նախ, նույն թվականին ստացած<sup>4</sup> պարսկերեն տառատեսակը Յուդթը պետք է հարմարեցնել տպագրական հաստոցին և փորձարկել: Բացի դրանից՝ նա պետք է շարունակեր հմտանալ պարսկերենի և թաթար-թուրքերենի մեջ, որոնց ուսումնառությունն սկսել էլ դեռևս նախորդ տարվանից<sup>5</sup>: Մինևույն ժամանակ, բողոքական քարոզիչները դժգոհում էին հայերեն գրքերի տպագրության դժվարություններից՝ պայմանավորված դրանց արտոնությամբ, որի կարգավորման հարցում նրանք հույսեր էին կապում Բազելի կենտրոնական ընկերության հետ: Բանն այն է, որ նախկինում իրենց տպագրած գրքերի տպա-

---

<sup>1</sup> Որպես օրինակ նշենք, որ Սբ. Կյուրեղի հիշյալ ճառի 14-րդ էջում հիշատակվում է Քրիստոսի կուսական ծնունդը Սբ. Մարիամ Աստվածածնից, որին քրիստոնեական բոլոր ավանդական եկեղեցիները, այդ թվում՝ Հայ եկեղեցին խոստովանում են «միշտ սուրբ կույս»: Այս վարդապետությունը, սակայն, մերժվում է բողոքական քարոզիչների կողմից: Եվ հակառակ այս իրողությանը՝ վերջիններս տպագրել են իրենց կրոնական համոզմունքներից տարբերվող հատվածներ պարունակող սույն գրքույկը:

<sup>2</sup> Evangelisches Missions-Magazin, Vol. 18, S. 473-474.

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 468:

<sup>4</sup> AKAK, т. VIII, с. 331.

<sup>5</sup> Evangelisches Missions-Magazin, Vol. 19, 1834, S. 441, 444-445.



գրության արտոնությունն ստացել էին ըստ սահմանված կարգի, ուստի դրանց վերատպության դեպքում այլևս անհրաժեշտ չէին համարում կրկին արտոնություն ստանալ: Քարոզիչները նպատակ ունեին վերահրատարակել ոչ միայն նախորդ տարիներին տպված ուսումնական և քարոզչական գրքերը, այլև 1834 թ. Մոսկվայում իրենց տպագրած Նոր կտակարանը, որի երկրորդ տպագրությունը նախատեսվում էր իրականացնել Շուշիում 3000 տպաքանակով Բրիտանական աստվածաշնչային ընկերության միջոցներով<sup>1</sup>:

Ինչ վերաբերում է Շուշիի տպարանի 1835 թ. գործունեությանը, ապա Յուդոթը հրատարակում է տեղի բողոքական քարոզիչներից Ֆելիցիան-Մարտին ֆոն Ջարենբայի (Felician-Martin von Zarembo)՝ դեռևս 1828 թ. գրած փոքրածավալ աշխատությունը, որը մուսուլմաններին դեպի քրիստոնեություն դարձի բերելու կոչ էր<sup>2</sup>: Այս աշխատությունը Շուշիում ոչ հայերեն, այն է՝ թաթար-թուրքերեն և պարսկերեն լոյս տեսած առաջին հրատարակությունն էր՝ 500 տպաքանակով: 1835 թ. հունվար-հուլիսին տպարանն զբաղված էր Շուշիի մեկ այլ քարոզիչ Կարլ Գոթլիբ Պֆանդերի պարսկերեն մի գրքի տպագրությամբ՝ 1000 տպաքանակով<sup>3</sup>:

Դրանից հետո Յուդոթը վերադառնում է հայերեն գրքերի տպագրությանը՝ նույն տարում վերահրատարակելով «Տեսրակ այբուբենական», «Առաջին կանոն սաղմուսի» և «Պատմութիւն Սուրբ Գրոց» գրքույկները՝ յուրաքանչյուրը 1200 տպաքանակով: Այս առիթով մենք տեղեկություններ չգտանք հիշյալ վերատպությունների համար քարոզիչների՝ նոր արտոնություն ստանալու վերաբերյալ, կամ էլ գուցե դրա անհրաժեշտությունը չկար, քանի որ նախկին տպագրությունների ժամանակ արդեն իսկ ձեռք էր բերվել այդ արտոնությունը: Նշենք նաև, որ նույն տարում այլ հրատարակություններ չեն եղել, քանի որ դրանց հետագա ընթացքը շատ աշխատատար էր՝ պայմանավորված նաև այն հանգամանքով, որ Յուդոթն իր երկու օգնականներից մեկին հեռացրել էր աշխատանքից մեզ անհայտ պատճառով<sup>4</sup>:

Վերոհիշյալ երեք հայերեն գրքույկներից հետո Շուշիի տպարանում

---

<sup>1</sup> Evangelisches Missions-Magazin, Vol. 20, 1835, S. 371-372.

<sup>2</sup> Evangelisches Missions-Magazin, Vol. 14, S. 438. Նշենք սույն հրատարակության վերնագրի պայմանական թարգմանությունները. հայերեն՝ «Մուսուլմաններին ուղղված կոչ», ռուսերեն՝ «Призыв к мусульманам» և գերմաներեն՝ “Aufruf an die Mohammedaner”:

<sup>3</sup> Evangelisches Missions-Magazin, Vol. 21, 1836, S. 460. Նշենք սույն գրքի վերնագրի պայմանական թարգմանությունները. հայերեն՝ «Ճշմարտության կշեռքներ», պարսկերեն՝ ռուսերեն տառադարձամբ «Мизинь-ил -Хакк», ռուսերեն՝ «Весы истины», գերմաներեն՝ “Waage der Wahrheit”: Պֆանդերի այս գիրքն ամբողջովին հերքում է իսլամը՝ միաժամանակ մերկացնելով մուսուլմանների սին մեղադրանքներն այն մասին, թե իբր քրիստոնյաները կեղծել են Հին և Նոր Կտակարանների սուրբ գրությունները (տե՛ս <https://www.deutschebiographie.de/sfz95179.html>, առ 22.12.2020):

<sup>4</sup> Evangelisches Missions-Magazin, Vol. 21, S. 460.

առհասարակ որևէ գիրք չի տպագրվել, ինչը բացատրվում է բողոքական քարոզիչների դեմ հայ հոգևորականների սաստկացող դժգոհություններով ու իրենց գործունեությունը խոչընդոտող մի շարք հանգամանքներով:

Մինչ օրս բազելյան քարոզիչների՝ 1834-1835 թթ. Շուշիում տպագրական գործունեություն իրականացնելու մասին հայկական սկզբնաղբյուրներում հիշատակության չենք հանդիպում: Ըստ 1835 թ. հրատարակված ռուսական սկզբնաղբյուրներից մեկի՝ Շուշիում գործող բազելյան քարոզիչների ուսումնարանին կից մինչև 1835 թ. շարունակում էր գործել մեկ հաստոցով տպարան, որտեղ հայերենով հրատարակվում էին ուսումնական գրքեր<sup>1</sup>:

Շայ հոգևորականները չէին կարողանա սահմանափակել բողոքականների գործունեությունը, եթե գործին չմիջամտեին ռուսական իշխանությունները<sup>2</sup>: Այսպես, Կովկասի գլխավոր կառավարիչ Գ. Ռոզենը բավական կոշտ դիրքորոշում ուներ բողոքական քարոզիչների ծավալած գործունեության նկատմամբ: Ռուսաստանի Ներքին գործերի նախարար Դ. Բլուդովին ուղղված Ռոզենի՝ 1835 թ. հունվարի 10-ի գրությունից տեղեկանում ենք, որ նա համամիտ է հայ հոգևորականների պահանջներին, քանի որ այլևս անթույլատրելի էր համարում բողոքական քարոզիչների գործունեությունը հայերի շրջանում: Գրության մեջ նշվում էր նաև, որ տարածաշրջանի մուսուլմանների ու հեթանոսների շրջաններում քարոզիչների՝ ի սկզբանե պաշտոնապես հաստատված մտեցումներն անկատար են մնացել, քանզի նրանց չէր հաջողվել որևէ մեկին քրիստոնյա դարձնել<sup>3</sup>: Գլխավոր հիմնավորումներից էր այն, որ ըստ ռուսական օրենքների՝ բացառապես Ռուս ուղղափառ եկեղեցուն էր թույլատրված քարոզչություն իրականացնել կայսրության ոչ ուղղափառ քրիստոնյաների շրջանում: Նույն թվականի հուլիսի 2-ին Ներքին գործերի նախարարությունը պաշտոնապես արգելում է Շուշիի բողոքականների քարոզչական գործունեությունը՝ նրանց թույլատրելով զբաղվել միայն հողագործությամբ և արհեստներով<sup>4</sup>:

Այս որոշումից հետո բողոքական քարոզիչները պաշտոնատար մարմիններին ուղղված գրություններով փորձեցին արդարացնել իրենց գործունեությունը, սակայն որևէ արդյունքի չհասան: Ավելին, երբ նրանք պատկան մարմիններին խնդրեցին գոնե թույլատրել Շուշիում շարունակել զբաղվել հրատարակչական գործունեությամբ, նույնպես մերժում ստացան<sup>5</sup>: Բավական երկարատև գրագրություն սկսվեց բողոքական քարոզիչների, Բլուդովի

---

<sup>1</sup> Статистическое описание Закавказского края, с присовокуплением статьи. Политическое состояние Закавказского края на исходе XVIII века и сравнение оною с нынешним, сост. Орест Евецкий, ч. II, Санкт-Петербург, 1835, с. 98.

<sup>2</sup> ԼԵՕ, Պատմութիւն Ղարաբաղի շայոց թեմական հոգևոր դպրոցի 1838-1913, Թիֆլիզ, 1914, էջ 95:

<sup>3</sup> АКАК, т. VIII, с. 313-320.

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 320-321:

<sup>5</sup> ԼԵՕ, նշվ. աշխ., էջ 96:

և Ռոզենի միջև<sup>1</sup>: Արժե հիշատակել, որ քարոզիչների գրություններում Շուշիում և Մոսկվայում իրենց հրատարակած գրքերի մասին որպես գլխավոր փաստարկ էր բերվում այն, որ դրանք տպագրվել են սահմանված գրաքննության և անհրաժեշտ թույլտվության պայմաններում<sup>2</sup>:

Այս իրավիճակում Շուշիի բողոքական քարոզիչները Կ. Պոլսի ամերիկացի քարոզիչներից առաջարկ էին ստացել տպարանը և տպագրիչ Յուդթին տեղափոխելու Սև ծովի ափամերձ Տրապիզոն քաղաքը: Նրան պետք է ուղեկցեին որոշ քարոզիչներ, որոնք տիրապետում էին արևելահայերենին, և այնտեղ հաստատվելով՝ կարող էին հայերեն գրքեր պատրաստել հրատարակության: Հնարավոր էր նաև տեղում վարձել մի քանի այլ քարոզիչներ, որոնք տպագրված գրականությունը կհասցնեին Օսմանյան կայսրությունում ապրող հայերին: Միաժամանակ հարկավոր էր պահպանել նախկինում ձեռք բերված բարիդրացիական հարաբերությունները Ռուսաստանի հայերի հետ: Տպարանը պետք է նպաստեր նաև հարակից շրջաններում ապրող մուսուլման ազգաբնակչության մեջ Աստծո խոսքն իրենց լեզվով տարածելուն: Սակայն բազելյան բողոքականները, մանրամասն ուսումնասիրելով այս առաջարկությունը, մերժում են այն՝ հանձնարարելով Զարեմբային և Յուդթին, որ վերջիններս պատշաճ կերպով իրականացնեն Շուշիում իրենց առաքելության ամբողջական դադարեցումը<sup>3</sup>:

Շուշիում բողոքական քարոզիչների գործունեության վերջնական դադարից հետո նրանց տպարանը 1837 թ. սեպտեմբերին գնում է Բաղդասար մետրոպոլիտը<sup>4</sup>: Շուշիում բողոքականների մյուս անշարժ գույքերը գնում է ռուսական կառավարությունը՝ տեղի պաշտոնյաների կարիքների համար<sup>5</sup>:

Շուշիում բողոքական քարոզիչների տպագրական գործունեության արդյունքում 1828-1835 թթ. հրատարակվեցին 29 անուն հայերեն, մեկ պարսկերեն ու թաթար-թուրքերեն և մեկ պարսկերեն գրքեր, որոնցում առհասարակ հիշատակված չեն տպարանի մասին տվյալները, ինչը տվյալ ժամանակաշրջանում հազվադեպ երևույթ էր: Հայերեն գրքերի և դրանց ցանկերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հրատարակված գրքերից 14-ը եվրոպական լեզուներից թարգմանված գիտական ուսումնասիրություններ են, իսկ 15-ը՝ դասագրքային հրատարակություններ: Աշխարհագրական լայն տարածում ունեցող վերոնշյալ 29 անուն հրատարակությունների տպաքանակի հանրագումարն անցնում է 35.000 միավորը, ինչը բավական խոսուն թիվ է տվյալ ժամանակաշրջանի հայկական գրատպության համար<sup>6</sup>:

<sup>1</sup> Evangelisches Missions-Magazin, Vol. 21, S. 467-480, AKAK, т. VIII, с. 323-332.

<sup>2</sup> AKAK, т. VIII, с. 324-325.

<sup>3</sup> Evangelisches Missions-Magazin, Vol. 22, 1837, S. 389-393.

<sup>4</sup> **ԼԷ**, նշվ. աշխ., էջ 121-122:

<sup>5</sup> AKAK, т. VIII, с. 332, Evangelisches Missions-Magazin, Vol. 23, 1838, S. 382.

<sup>6</sup> Շուշիի 1828-1835 թթ. տպագրությունների աշխարհագրական տարածումը, ինչպես նաև ճշգրտված և ծանոթագրված ցանկը տե՛ս **Պետոյան Մ.**, Նոր էջեր 1828-1835 թթ. Շուշիում

Ելնելով տվյալ ժամանակաշրջանում հայերեն գրքերի տպագրության անհրաժեշտությունից՝ բողոքական քարոզիչներն իրավացիորեն նշում էին, որ հայերեն առկա տպագիր գրականությունը հասանելի չէ շատերին, հատկապես՝ չունևոր խավին: Մինչդեռ բողոքական հրատարակության գրքերի մի մասը բաժանվում էր անվճար, իսկ մյուս մասը վաճառվում էր մատչելի գներով<sup>1</sup>: Ընդհանրապես, անդրադառնալով Շուշիի բողոքական քարոզիչների տպարանի առանձնահատկություններին՝ կարող ենք նշել, որ գրքեր տպագրելիս առաջնորդվել են գրքի բովանդակության կարևորությամբ, այլ ոչ թե տպագրական արվեստի ճոխությամբ, քանի որ բողոքական քարոզիչների տպագրական գործը, ի տարբերություն հայկական շատ տպարանների, հիմնականում շահույթ չէր հետապնդում:

Հարկ է արձանագրել, որ Էջմիածնի Մայր Աթոռի տպարանը 1821-1833 թթ. չէր գործում, ինչը վկայում է այն մասին, որ Շուշիի տպարանը (1827-1835 թթ.) մինչև 1833 թվականը Արևելյան Հայաստանում միակ գործողն էր: Այն մինչ օրս ըստ արժանվույն չի ուսումնասիրվել, քանի որ անցյալում ավելի շատ ընկալվել է քարոզչական գործունեության տեսանկյունից: Ուշագրավ են հատկապես Լեոյի հետևյալ տողերը. «Միայն այս տպարանը, ինքնըստինքեան, մի գեղեցիկ երևոյթ էր Շուշու խաւար իրականութեան մէջ, որին կարող էր նախանձել նոյնիսկ Էջմիածինը իր անկատար տպարանով»<sup>2</sup>: Միանշանակ է, որ Շուշիի տպարանն իր կարճատև գործունեության ընթացքում ուրույն դերակատարություն է ունեցել հայ տպագրության պատմության մեջ:

### ***Ստյոպա Պետոյան – Բազելյան բողոքական քարոզիչների՝ Շուշիում հիմնադրած տպարանի պատմությունը (1827-1835 թթ.)***

1827-1835 թթ. Շուշիում գործել է Բազելյան բողոքական քարոզիչների հիմնադրած տպարանը: Շուշիում տպագրած իրենց գրքերը նրանք բաժանում էին երկու խմբի՝ դասագրքային հրատարակությունների և գիտական ուսումնասիրությունների (տրակտատներ), որոնք հանդիսանում էին առաջին տպագրությունները Ղարաբաղի ամբողջ տարածքում: Հողվածում մանրամասն վերլուծության են ենթարկվել սույն տպարանի աշխատանքները, հրատարակությունները, դրանց կիրառական նշանակությունը, ինչպես նաև գրաքննության և տպագրության թույլտվության հետ կապված հարցերը:

---

տպագրված գրքերի պատմությունից // «Մյունիք հայագիտական հանդես», 2020, թիվ 1, էջ 69-86:

<sup>1</sup> Evangelisches Missions-Magazin, Vol. 16, S. 502-503.

<sup>2</sup> Տե՛ս Լեո, նշվ. աշխ., էջ 93:

**Տէպա Սետոյան – *История типографии в Шуши, основанной базельскими протестантскими миссионерами (1827-1835 гг.)***

**Ключевые слова** – Шуши, протестантские миссионеры, Базельское Евангельское миссионерское общество, Синод Святого Эчмиадзина, издательство, типография, книга, буклет, цензура

В 1827-1835 годах в Шуши действовала типография, основанная базельскими протестантскими миссионерами. Опубликованные в Шуши книги они разделяли на две группы: учебные издания и научные исследования (трактаты), которые стали первыми публикациями на всей территории Карабаха. В статье мы подробно проанализировали работы, издания этой типографии, их прикладное значение, а также вопросы, связанные с цензурой и разрешениями на печать.

**Styopa Petoyan – *History of the Printing House in Shushi, Founded by Basel Protestant Missionaries (1827-1835)***

**Key Words** – Shushi, Protestant Missionaries, Basel Evangelical Missionary Society, Synod of St. Etchmiadzin, Publishing, Printing house, Book, Booklet, Censorship

In 1827-1835, a printing house functioned in Shushi, founded by Basel protestant missionaries. The books published in Shushi were classified into two groups: educational publications and scientific tractates, which were the first editions throughout the territory of Karabakh. In the article we have analyzed in detail the works, publications of this printing house, their applicable signification, as well as issues related to censorship and printing permissions.

Ներկայացվել է 11.01.2021

Գրախոսվել է 19.02.2021

Ընդունվել է տպագրության 14.04.2021